ՕՐԳԵԵՒ (ՕՌՀԵՑ)

Քիշնևից և Գրիգորիոպոլից հետո Օրգեևը եղել է Մոլդովայի ամենաստվար հայկական դաղթօջախը: գտնվում է Քիշնևից դեպի հյուսիս՝ շուրջ 30 կմ հեռավորության վրա: XIX դարի առաջին տասնամյակներին այստեղ բնակվելիս են եղել 60 տուն հայեր, որոնք ունեցել են իրենց դպրոցը և եկեղեցին՝ Ս.Աստվածածին անվամբ[18]: Մինչև օրս լավ պահպանված այս գողտրիկ տաճարը ուշադրավ է իր ճարտարապետական հորինվածքով և տիրապետող դիրքով: Գտնվում է քաղաքի կենտրոնական հրապարակից 200 մ հեռավորությամբ, լեհական եկեղեցու մոտ: Դա միանավ, երկու ավանդատներով, թաղածածկ դահլիճ է՝ կառուցված գորշավուն ավազաքարով: Միակ մուտքը արևմուտքից է: Եկեղեցի կարելի է բարձրանալ լավ մշակված 21 քարե աստիճաններով: Ճարտարապետության դոկտոր Ա.Խ. Թորամանյանի կարծիքով, տաճարը կառուցված է մեծանուն ճարտարապետ Ալեքսանդր Բեռնարդացու նախագծով, Բաղդասարյան եղբայրների նախաձեռնությամբ և նյութական միջոցներով: Եկեղեցու կառուցման աշխատանքներին նպաստավորել են Հովհաննէս Բալիոզը, Սարգիս Զերքեզը, Հարությունն Նազարյանը և ուրիշներ[19]: Այժմ այստեղ է գտնվում Օրգեև քաղաքի «Տնային խոհանոցը», որի ղեկավարությունը շենքի ներսում կատարել է մի շարք փոփոխություններ: Եկեղեցու պատերին՝ ոչ մի արձանագրություն չի պահպանվել:

Օրգեևում պատմամշակութային արժեք է ներկայացնում դեռևս գոյատևող հայկական գերեզմանոցը:

ՕՐԳԵԵՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Գտնվում է քաղաքային հիվանդանոցի մոտ. շուրջը ցանկապատված է, տապանաքարերը ծածկված են հողազանգվածով կամ տեղահանված են: Մի շարք մարմարակերտ կոթողներ օգտագործվել են հետագայում այլևայլ նպատակներով: Հուշարձանախմբի վիճակն, ընդհանուր առմամբ, անմխիթար է. հին գերեզմանների վրա կատարվում են նոր թաղումներ, որոնց պատճառով բազմաթիվ տապանաքարեր ջարդոտված են: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ առաջիկայում Օրգեևի հայոց գերեզմանատունը աստիճանաբար ոչնչանալու է, վիմագրական արշավախումբը նպատակահարմար գտավ ընդօրինակել անխտիր բոլոր արձանագրությունները, առանց նկատի ունենալու նրանց փորագրության ժամանակը[20]:

721. Տապանաքար, *սպիտակ մարմարից, կենտրոնում՝ գծախաչ, որի ստորև՝ 5 տող.*

НИКОЛАЙ АРТЕМЕВИЧ/ ФОКШАНІЯНЪ/ РОДИЛСЯ 30-ГО ДЕКАБРЯ 1835 ГОДА/ УМЕРЪ 30-ГО ДЕКАБРЯ 1881 ГОДА/ НА 46 ГОДУ ОТЪ РОДУ.

722. Տապանաքար, *սև մարմարից, գլխամասում՝ խաչ, որի տակ՝ 7 տող.*

ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ/ ИВАНА ИВАНОВИЧА/ ПАНИГЯНЦА./ СКОНЧАЛСЯ НА 73 ГОДУ 10 ЯНВАРЯ 1901 Г./СПИ СПОКОЙНО, ДОРОГОЙ ОТЕЦЪ, МУЖЪ И ДЕДУШКА.

723. Տապանաքար, *սպիտակ մարմարից, կենտրոնում՝ գծախաչ, ստորև՝ 5 տող.*

---

18 Մ.Բժշկյան, էջ 188:

19 Ա.Խ.Թորամանյան, նշվ. աշխ., էջ 50:

20 Տեղում աչակցելու համար շորհակալություն ենք հայտնում Օրգեևի պատմահնագիտական թանգարանի տնօրեն Տ.Խ. Բրաչկոյին:

МАЛХАСЪ ВОСКАНОВИЧЪ/ РИПСИМІЯ КАРПОВНА/ И ЕЛИЗАВЕТА/ БОГОСОВЫ./ СКОНЧАЛИСЬ 1875 ГОДА, 17 МАРТА.

724. Կոթող, *խաչակերպ, ուղղահայաց դիրքով, վերևը ճաքած: Ստորին մասը մաքրելուց հետո բացվեցին բուսական զարդեր (ծաղկեփունջ և այլն), ունի 7 տող.*

ԻՆԵՐՔՈՅ ՏԱՊԱՆԻՍ
ԵՆՋԷ ԾԵՐՈՒՆԻԿԻՆ
ԶԱՆԱ ԶԱՆՄԱՅՐ
ՖԷՀՐԱԹԻՄԵՆԱՍԵՆ
ՎԱԽՃԱՆԵՑԱԻ 85
ՏԱՐԵԿԱՆ 1839
Ի 8 ՄԱՐՏԻ

Ի ՆԵՐՔՈՑ ՏԱՊԱՆԻՍ/ ՆՆՋԷ ԾԵՐՈՒՆԻԿԻՆ/ ԶԱՆԱԶԱՆ՝ ՄԱՅՐ/ ՖԷՀՐԱԹԻ ՄԻՆԱՍԵԼԱԽ./ ՎԱԽՃԱՆԵՑԱԻ 85/ ՏԱՐԵԿԱՆ 1839/Ի 8 ՄԱՐՏԻ:

725. Տապանաքար, *կրաքարից, կիսաթաղ վիճակում, փոքր-ինչ ձախ թեքված: Վրան՝ 8 տող.*

ԱՍՏ ՆՆՋԷՄԱՐՄԻՆ
ԱԼԵՋԱՐԴ ՄԱՐԻԱՄԻՆ
ԳՐԻԳՈՐԵԱՆ. ԿԻՆ
ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԻ
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ՎԱԽՃԱՆԵՑԱԻ 75
Ց 1863 Ի 26 ՅՈՒՆՈՒԱՐ
Ի

ԱՍՏ ՆՆՋԷ ՄԱՐՄԻՆ/ ԱԼԵՋԱՐԴ ՄԱՐԻԱՄԻՆ/ ԳՐԻԳՈՐԵԱՆ՝ ԿԻՆ/ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԻ/ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ./ ՎԱԽՃԱՆԵՑԱԻ 75/ ԱՄԱՑ 1863 Ի 26 ՅՈՒՆՈՒԱՐ/Ի:

726. Տապանաքար, *սպիտակավուն կրաքարից, քանդակազարդ. ունի 5. տող.*

Ի ՆԵՐՔՈՑ ԱՅՍՐ ՏԱՊԱ/ՆԻ ՆՆՋԷ ԲԱՐԻԱՆՈՒՆ/ ԲՕՄԵՇՋԻՔ ՍԱՐԳԻՍ/ ՄԵԼՔՈՆՈՎ, ՇԻՇՄԱՆ/ԵԱՆՑ:

Լուսանկ.*185*

727. Տապանաքար, *սպիտակավուն կրաքարից, քանդակազարդ. վրան՝ 5 տող.*

Ի ՆԵՐՔՈՅ ԱՅՍՄ ՏԱՊԱՆԻ/ ՆՆՋԷ ԲԱՐԻԱՆՈՒՆ ԱԼՍՏՈՒԱԾԱ/ՏՈՒՐ ՅԱՐՈՒԹԻՒ-ՆԵԱՆ/ ՅԱՄԱՑ ՎԱՂՃԱՆԵԱԼ/1843, ՀՈԿՏԵՄԲԵՐ 15:

728. Տապանաքար, *սպիտակավուն կրաքարից, ներքևը կոտրված: Վրան՝ 7 տող.*



ՅՍ ՔՍ/ ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԼԱԽ/ԳՍՏԵԱՆ --ՈՂ ԿԱ/ՐԱՊԵՏ ԾԱՌՈՒԿ/ԵԱՆԻՆ ՆՆՋԵԼ/ 57 ՏԱՐԵԿԱՆ/ 1829 ՅՈՒՆԻՍԻ:

729. Տապանաքար, *սպիտակավուն կրաքարից, մեջտեղից կոտրված, 7 տող.կիսեղծ արձանագրությամբ.*

Ի ՆԵՐՔՈ ԱՅՍՐ ՏԱ/ՊԱՆԻ ՆՆՋԷ/ԲԱՐԻԱՆՈՒՆ ՈՍԿԱՆ/ ՄԼԱՀԼՏԵՍԻ ՊՈՂՈՍԵԱՆ/ Ի ՀԱՍԱԿԻ 70 ՏԱՐԵԿԱՆ/ ՎԱՂՃԱՆԵԼ 18.../ ՆՈՅԵՄԲԵՐԻ:

730. Տապանաքար, *կրաքարից, վրան ծաղկամանով ծաղիկներ և 11 տող.*

ПРОХОЖИЙ/, ОСТАНОВИСЬ/, НЕ ПРЕЗИРАЙ МОЙ/ ПРАХЪ Я ДОМА, А/ ТЫ ВЪ ГОСТЯХЪ/. ЗДЕСЬ ПОКОИТСЯ / ПРАХЪ ТАТОСА /САРКИСОВ[ИЧ]А ГЕКИ/МОВА СКОНЧАЛСЯ ВЪ 1865 Г. ІЮНЯ 20 ДНЯ НА 60 ГОДУ ОТЪ РОЖДЕНІЯ.

731. Տապանաքար *սպիտակ կրաքարից, դագաղաձև, մակերեսին՝ 3 տող.*

ЗДѢСЬ ПОКОИТСЯ ПРАХЪ РАБА. /БОЖЬЯ ПЕТРА ПЕТРОСОВИЧА КЕВОРК...

Ծանոթ. *Շարունակությունը չի փորագրված, թեև տեղ կա:*

732. Տապանաքար, *կրաքարից, քայքայված վիճակում, Հայրենական պատերազմում զոհված զինվորների հուշարձանից փոքր-ինչ հեռու: Վրան՝ գծուխաչ և 13 տող.*



ՓՈԽԵՑԱՒ ԱՌ ԱԾ
/1898 ԱՄԻ/ ՅՈՒՆՈՒԱՐԻ 29/
ԿԵՆԱՑ ԾԱՅՆ/ԻՒ ՎԵՐՋԼԻԼ ՓՈՂՈՑ/
ԿՈՉԷԱ ՋԻՍ ՏԷՐ/ ՅԱՅՍՄ ՀՈՂՈՑ
ՋԻՄ/ԱՍՏՈՒՆ (՞) ՍԲ ԿՈՒՍԱՆԱՑ/
ՄՈՅԾ ՋԻՍ Ի Տ[ՈՒ]Ն ՔՈ/ ՀԱՐՍԼԱՀԼԵԱՑ].
ՏՐ ԿԱՐԱՊԼԵ]Տ/ ՋՔՈ ԾԱՌԱՆ
ԱՐ/ԺԱՆԱՑՈ ՔՈՅԴ/ ՏԵՍՈՒԹԵԱՆ:

Մանոթ. 4-րդ տողում Ջ-ի փոխարեն փորագրվել է Ծ: Կասկած է հարուցում ՋԻՄԱՍՏՈՒՆ բառի վերծանությունը:

733. Տապանաքար, կրաքարից, հողմահարված: Գտնվում է կալվածատեր Ս.Շիշմանյանցի տապանաքարի մոտ: Վրան՝ 5 տող.

ԱՍՏ ՀԱՆԳՋԻ ՄԱՐՄԻՆ/ ՅՈՎՀԱՆՆԷԱՑ /Ե/ՔՈՒՐ ՇԻՇ/ՄԱՆԵԱՆՑ ԾԸՆԵԼՆ Ի 25/ ՈԿՏԵՄԲԵՐ 1851 ԵՒ ՄԵՌԱԻ/ ... 1875/՞ ... ՆՈՅ/ԵՄԲԵՐԻ/...

734. Կոթող, սև մարմարից, գագաթի խաչը կոտրված, երկաթե ցանկապատի մեջ: Արևելյան կողմին՝ 4 տող.

МАРКАРЪ ДАВИДОВИЧЪ/ ФОКШАНЯНЪ СКОНЧ 13 АВГУСТА/ 1899.

735. Տապանաքար, դագաղաձև, սպիտակ մարմարից: Խաչի տակ 8 տող եղծված արձանագրություն.



покоится прахъ
Артемиевны
селъ
Фокшаньянъ
бря 1854 г.
ештахъ
сконч бря 1903 г.
въ Орге евѣ.

...ПОКОИТСЯ ПРАХЪ / ...АРТЕМИЕВНЫ/... СЕЛЪ / ФОКШАНЬЯНЪ/ ...БРЯ 1854 Г./ ...ЕШТАХЪ/ СКОНЧ. 21 ...БРЯ 1903Г. / ВЪ ОРГЕЕВѢ

Մանոթ. Քաղաքացիական պատերազմի հերոս Սերգեյ Լազոն ծնվել է Օրգեև քաղաքից 8 կմ հեռավորությամբ գտնվող Պյատրի (այժմ՝ Լազո) գյուղում: Նրա մասին եղած գրքերում նշվում է, որ Լազոյի ընտանիքը բարեկամական կապերի մեջ է եղել Ֆոկշանյան մեծահարուստ կալվածատերերի հետ: Կարելի է ենթադրել, որ Ֆոկշանյանները հայեր են, թեև Սերգեյ Լազոյի մասին եղած գրքերում նրանք ներկայացված են իբրև մոլդովացիներ (մոլդովներ) Ֆոկշանյանու ազգանուններով:

ԲԵԼՑԻ (ԲԵԼՑ, ԲԵԼԸՑ)

Հայկական ոչ ստվար գաղթօջախ է ունեցել Քիշնևից հյուսիս-արևելք գտնվող Բելցի քաղաքը, որի հայ բնակիչների թիվը տարբեր տարիներին հասել է մինչև 700 մարդու[21]: Մ.Բժշկյանի այցելության ժամանակ այստեղ ապրել են ընդամենը տասը հայ ընտանիք[22], որոնք զբաղվել են վաճառականությամբ, երկրագործությամբ և արհեստներով: Քաղաքի երկրագիտական թանգարանի ֆոնդերում պահպանված գրավոր տեղեկությունների համաձայն՝ հայոց հին եկեղեցին՝ Ս.Նիկողայոսը, կառուցվել է 1795 թ. ռումին բոյար, ծագումով հույն Գեորգի Պանաիտի ծախսով: Նախագծի հեղինակն է եղել գալիցիացի ճարտարապետ Վեյսմանը: Արևելյան և արևմտյան կողմերից կառույցն ունեցել է քանդակազարդ ճակտոններ, ներքուստ՝ հարավային և հյուսիսային

---

21 Ա.Խ.Թորամանյան, նշվ., աշխ., էջ 26:

22 Մ.Բժշկյան, էջ 188: